№ 10 Յունվարի 22 (Փետրվարի 3) 1881 Յունվարի 22 (Փետրվարի 3) № 10

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 բ., հինգ ամս. 5 բ., չորս ամս. 4 բ., երեք ամս. 3. բ. երկու ամս. 2 բ. և մի ամս. 1 բուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի պատասխան։—Ներքին տեսութիւն։ Հակասեմիտական շարժում։ Նամակ Երեւանից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գերմանիա։ Նամակ Ֆրանսիայից։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

—

„Մեղու Հայաստանի“ լրագրի այս տարվայ 2-րդ համարը հրատարակվեցաւ յունվարի 20-ին։ Այդ համարի մէջ „Մեղուն“ իր սովորական կեղտոտ կերպով ակնարկում է Փելիետօնի մէջ որ „Մշակը“ բողոքականների օրգան է և կարող է ստանալ օժանդակութիւն միսիոնարական բողոքական ընկերութենից։

Միշտ մի և նոյն կեղտոտ և անազնիւ ձև յեղաշրջել մտքերը և հակառակորդի սասածները։ Մենք ասեցինք որ ուրախ ենք, որ այլադաւան հայերը գրվում են „Մշակին“, մենք չասեցինք որ միայն աւետարանական հայեր են գրվում, այլ այլադաւան ասելով հասկանում ենք և կաթոլիկ հայերին։ Կաթոլիկ հայերի հետ, օրինակ, ի՞նչ գործ ունի միսիոնարական բողոքական ընկերութիւնը։ Մենք ասեցինք, որ մեր նպատակն էր միշտ դարձնել „Մշակը“ ընդհանուր հայոց ազգային օրգան, բայց ոչ թէ ազգի մի կրօնական մասի օրգան, մեր նպատակն է ծառայել ազգի ընդհանուր շահերին, առանց խտրութիւն դնելու մեր ազգի մէջ գոյութիւն ունեցող այլ և այլ կրօնների մէջ։ Մենք կրկնում ենք, որ շատ ուրախ կը լինէինք եթէ մահմեդական հայերն էլ սկսէին գրվել մեր լրագրին։

Իսկ այժմ „Մեղուի“ ստոր ինսինուացիային մենք կը պատասխանենք, որ մենք այն մարդիկներից չենք, որոնք որ և է ընկերութեան,—լինի դա բողոքական միսիոնարների, կաթոլիկ եղուիտների, կամ Թիֆլիսի հաստափոր վաճառականների ընկերութիւնը, — դրամական օժանդակութեամբ հրատարակեն մեր թերթը։ Մենք կը հրատարակենք „Մշակը“ քանի որ բաժանորդներ և սեփական նիւթական միջոցներ կունենանք, իսկ եթէ այդ երկու աղբիւրներն էլ պիտի կորցնէինք, մենք լաւ կը համարէինք բոլորովին հրաժարվել մեր լրագրի հրատարակութիւնից, կամ դուցէ շաբաթը մի անգամ, վերջապէս ամիսը մի անգամ հրատարակել թերթը,—քան թէ կաշառվել Թիֆլիսի վաճառականներից և խաւարասէր ու բթամիտ հայ ինտելիգենցիային պատկանող ամենափտածներից, կամ, որ աւելի էլ վատ է, ստանալ Էջմիածնից մի քանի հարիւր բուբլ, նրա արածների մասին լռելու պայմանով։

Մեզ համար գործունէութեան անկախութիւնը ամենաթանգագին բանն է։

Մենք դարձեալ կրկնում ենք Պետրոս Սիմէօնեանցին, որ նա վարվում է ինչպէս Մոսկվայի ժուլիկները. ինչ որ ինքն է անում, վերաբերում է ուրիշներին։ Մենք լռում էինք նրա արածների վրա, բայց նրա մեզ վրա արած անազնիւ և կեղտոտ յարձակմունքը տեղիք է տալիս մեզ պարզապէս յայտնել, որ ահա մի ամբողջ տարի է, որ նա շողոքորթում է ազգի այն բոլոր տարրերին, որոնցից յոյս ունի ստանալ դրամական օժանդակութիւն, ծախելով նրանց իր անկախութիւնը, իր խօսքի ազատութիւնը, եթէ երբէք ունեցած է այդ անկախութիւնը և այդ ազատութիւնը։ Եւ այդ տարրերը հետեւեալներն են. Էջմիածինը, մեր ինտելիգենցիայի ամենաբթամիտ ու ամենափտած մասը և ազգի վրա թափող Թիֆլիսի վաճառականները։ Իր մտաւոր և բարոյական անկախութիւնը մի քանի ակցիաներ անուանվող ողորմութեան, այն է մօտ երկու հազար բուբլու համար ծախող ստոր մարդը, յանդգնում է ուրիշի վրա ստուեր գցել։ Ուրիշի վրա կեղտը գցելու նպատակը, իր սեփական կեղտը ծածկելն է։

„Մշակը“ պահպանվել է, պահպանվում է և միշտ կը պահպանվի տարեկան կամաւոր բաժանորդներով և մեր սեփական միջոցներով, իսկ եթէ մենք մի անգամ կատարելապէս աղքատանայինք,—մենք երբէք ամենաստոր և իր պատուի վերջին նշոյլը կորցրած փողոցային մուրացկանի պէս ձեռք չէինք մեկնի ոչ ոքին, ծախելով մեր բարոյական անկախութիւնը և ազատապէս մտքեր յայտնելու իրաւունքը, այլ աւելի լաւ կը համարէինք կատարելապէս դադարեցնել «Մշակի» հրատարակութիւնը և գաղթել ուրիշ երկիր, հեռու գնալով այն հասարակութիւնից, որ ընդունակ է վարձատրել միմիայն ստորութիւնը և ցածութիւնը, վախենալով միմիայն ստորութիւնից և ցածութիւնից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱԿԱՍԵՄԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

—

Սկսած այն ժամանակից, երբ եւրոպական տէրութիւնները յանուն արդարութեան և քրիստոնէական մարդասիրութեան միջազգային դաշնագիրներով արժատախիլ արին հին աշխարհից աւանդած սարկութիւնը, այդ տանջանքներով, արիւնով և դառն արտասուքով լիքը հաստատութիւնը (институтъ), սկսած այն ժամանակից երբ Ֆրանսիական յեղափոխութիւնը յայտնեց մարդկութեանը „հաւասարութեան“ բարձր սկզբունքը,—այդ ժամանակից սկսած գիտութիւնը իր ամենապայծառ պրինցիպներից մէկն է համարում՝ մարդկանց հաւասարութիւնը բարոյական և իրաւաբանական տեսակէտից։ Բայց ի՞նչ ենք տեսնում իրական աշխարհում։ Մարդկութիւնը կարծես արհամարհում է գիտութեան ձայնը։ Հակասեմիտական ուղղութիւնը պարզ ցոյց է տալիս թէ որքան շօշափելի է կեանքի և գիտութեան եզրակացութիւնների մէջ նշմարվող հակասութիւնը,—մի տարօրինակ երեւոյթ որ չէ ներդաշնակում լուսաւորութեան և առաջադիմութեան ընթացքի հետ։

Այն խայտառակ շարժումը որ յայտնվեցաւ վերջին ժամանակը հրէական տարրի դէմ Գերմանիայի խաւարամիտ շրջաններում, արձագանք գտաւ և ռուս յետադէմ կուսակցութեան մէջ։ Այն ինչ մայրաքաղաքների ռուս ամբողջ մամուլը ծաղրում էր „լուսաւոր Գերմանիայում“ ծնված հրէաշաւոր ուղղութիւնը, Մոսկվայի մի լրագիր միայն բոլոր սրտով համակրեց հակասեմիտական ուղղութեանը և համակրեց ոչ թէ միայն պաշտօնական կերպով, այլ և նիւթականապէս, պարագլուխ հանդիսանալով մի իբր թէ կազմակերպվող ընկերութեան, որի նպատակն է ընդդիմադրել հրէական կեանքի զարգացմանը։ „Չը դիմել ոչ մի հրէայի ինչ արհեստի և պարապման չը լինի նա,“—ահա այդ կոչվող ընկերութեան նշանաբանը։ Կարծիք չը կայ որ նրան հաջիւ թէ յաջողի իրագործել իր նպատակը, բայց իրողութիւնը, երեւոյթը ինքն ըստ ինքեան շատ ցաւալի է։ Հրէաների դրութիւնը Ռուսաստանում առանց այն էլ աննախանձելի է։ Զրկված լինելով մի շարք քաղաքական և պետական իրաւունքներից հրէական ինտելլիգենցիայի ներկայացուցիչները սեփական օրգաններում աշխատում են փշրել հասարակութեան մէջ դարերով ամրացած նախապաշարմունքները և աւանդական ատելութիւնը դէպի սեմիտական տարրը։ Փոխանակ համակրելու և ամենակերպ նպաստելու այդ գեղեցիկ գործունէութեանը, դեռ գտնվում են հրապարակախօսներ, որոնք չեն ամաչում լրագրի էջերից ատելութիւն և թշնամութիւն քարոզելու դէպի հրէաները։ Այդպիսի մի անարգ ձգտում կարող էր յայտնվել միայն մի նեղ, յետադէմ և թթված ազգասիրական շրջանում։

Չը պէտք է կարծել որ հակասեմիտական շարժումը նոր ժամանակներում յայտնվեցաւ Գերմանիայում և մասամբ Ռուսաստանում։ Դեռ անցեալ տարի Նիւ-Յորկում կազմվել էր մի միութիւն, որ ընտրել էր իր նպատակը՝ ոչնչացնել հրէական ցեղը։ Այդ ընկերութեան կանոնադրութեան ամեն մի յօդուածը շնչում է ամենակոյր ֆրանատիկոսութիւնով։ Ահա այդ յօդուածներից մի քանիսը.—Չը պէտք է յաճախել եկեղեցի, որովհետև այնտեղ երգվում են Դավիթ մարգարէի սաղմոսները։ Չը պէտք է յաճախել կօնցերտներ, որովհետև այն-

տեղ տալիս են Օֆֆենբախի, Մենդելսօնի, Մայերբերի և ուրիշ հրէայ կոմպոզիտորների շարադրութիւնները։ Պէտք է աշխատել, որ հրէաները չընտրվին պարլամենտի անդամներ, որովհետև Բիկոնսֆիլդը Անգլիայում, Լասկերը Գերմանիայում, Թիլ Սիմոնը և Նրեմիէն Ֆրանսիայում պետական կեանքի մէջ մեծ նշանակութիւն են ստացել։ Չը պէտք է կարդալ Աուերբախի, Հայնէի, Բերտօլդիի և ուրիշ հրէայ հեղինակների գրուածքները։ Չը պէտք է ստանալ Հարպերի պատկերազարդ ամսագիրը, որովհետև նրա գլխաւոր աշխատակիցը—հրէայ է։ Չը պէտք է ստանալ „Նիւ-Եօրկ-Հերալդ“ լրագիրը, որովհետև նրա հրատարակողը յաճախում է հրէական ընտանիքներ և այլն...

Թէ որքան անմիտ է այդ կանոնադրութիւնը և թէ ինչ հասկացողութեան տէր մարդիկ են նրա հեղինակները և հետևողները,—այդ պարզ է ընթերցողի համար։ Մեզ մնում է միայն ասել, որ հակասեմիտական շարժումը արտայայտում է ոչ այլ ինչ, եթէ ոչ յետադէմ կուսակցութիւնների թշնամութիւնը դէպի յառաջադիմութիւնը, որի համար միշտ գործել են և գործում են հրէաները։

Մոսկվա Ս. Դաղեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունվարի 12

Արդէն յայտնված է պաշտօնապէս, որ Եղիազար արք-եպիսկոպոսը հանված է Երևանի թեմի փոխանորդական պաշտօնից, զրկված է արքութեան տիտղոսից և նշանակված է անորոշ միջոցով բնակվելու Գեղարդայ վանքի մէջ, քաւելու իր եօթնամեայ փոխանորդական պաշտօնում գործած մեղքերը։ Եօթնամեայ պաշտօնավարութեան ընթացքում երկու անգամ Երևանայ ժողովուրդը, երեք անգամ ինքը Եղիազար արհին՝ խնդրամատոյց են եղել բարձրագոյն հոգևոր իշխանութեան, որ արձակէ նրան իր պաշտօնից և թոյլ տայ բնակվել Էջմիածնայ խցերից մէկի մէջ, բայց հոգ. իշխանութիւնը մերժել է թէ ժողովրդի և թէ նորին սրբազնութեան խնդիրը. առաջնոյն պատասխանելով թէ «դրա ծերութիւնն ու տկարութիւնը պատճառ չէ կարող լինել պաշտօնից հանելու», իսկ իրան պատասխանելով թէ «ս պ ա ս ի ր»։ Մի և նոյն միջոցին հոգ. իշխանութիւնը պակասեցրեց սրբազանի տարեկան ռոճիկը՝ 1200 ռուբլին իջեցնելով 600 ռուբլու, որպէս զի՝ ինքը սրբազանը, թողնէ երթայ իրովին. սակայն նա մնաց և չարունակ պահանջեց իր ռոճկի պակասը և չուզեց հասկանալ հ. իշխանութեան դիտաւորութիւնը։ Մատթէոս կաթողիկոսի օրով պատահած միաբանութեան ապստամբութեան մէջ Եղիազար արքեպիսկոպոսը նշանաւոր դեր խաղալով, առանձին տպաւորութիւն էր թողել նոյն միաբանութեան մէջ։ Այս հանգամանքը հոգ. իշխանութիւնն ի նկատի ունենալով, չէր ցանկանում երբէք որ նորին գերապատուութիւնը մնայ Էջ. միաբանութեան չրջանում։ Մի և նոյն ժամանակ հ. իշխանութիւնը նշանակելով նրան փոխանորդ՝ խլել էր նրանից փոխանորդական պաշտօնին յատկացած բոլոր աւանդական իրաւունքները և այսու վնասել էր ոչ միայն Եղիազար եպիսկոպոսին նիւթապէս և բարոյապէս, այլ և ամբողջ Երևանի թեմի եկեղեցիներին և դպրոցներին, գուցէ և անգիտակցաբար։ Թեմական փոխանորդը զրկված լինելով իրական-իշխանական միջոցներից՝ լոկ բարոյական միջոցներով չը կարողացաւ կարդի պահել իր ստորադրեալ եկեղեցական և դպրոցական գործոց սպասաւորներին և այդու անիշխանութիւնը տիրեց թէ եկեղեցիների և թէ եկեղեցականների մէջ, և թէ դպրոցականների մէջ, որոնց մերձաւոր հսկողութիւնը յանձն է եղած համաձայն օրինաց, թեմական առաջնորդին։ Այսպիսի անիշխանութեան միջոցին, չատ եկեղեցիների և դպրոցների չարժական և անչարժ կայքերը մասնաւոր անձերի սեփականութիւն դարձան, ժողովուրդը պաղեց դէպի բարձրագոյն հոգ. իշխանութիւնը և սկսեց կասկածել ազգային կոչված գործերի յառաջադիմութեան նկատմամբ. ուստի, ամենայն զոհաբերութիւն ազգային հիմնարկութեանց նկատմամբ, (իրաւացի և թէ անիրաւացի), կորուստ համարեց, որ և անտարբերութիւնը տիրեց ժողովրդի մեծամասնութեան սրտի և զգացմանց վրա։

Հոգևոր իշխանութեան և Եղիազար եպիսկոպոսի մէջ եղած յարաբերութեան չնորհիւ ժողովուրդը կրում է վերոյիշեալ նիւթական և բարոյական վնասները, եօթը տարվայ ընթացքում։ Այժմ Եղիազար եպիսկոպոսը 72 տարեկան հասակում, մեղադրվելով մի տարաբաղդ կնոջ պաշտպանելու պատճառաւ, մի կնոջ, որ ազգական է իրան, որ չարաչար տանջված է իր մարդու անտանելի վարք ու բարքից, այժմ այդ կնոջ առթիւ ոստիկանութեան դիմադրելու աղագաւ և հոգ. իշխանութեան հրամանին ևս հակառակելու համար, պաշտօնանկ է եղած խեղճ ծերունին և պատուէր է ստացել գնալ Գեղարդայ վանքն յաքսոր։

Եթէ հ. իշխանութիւնը պատժած լինէր ծերունի եպիսկոպոսին կեղծ վկայականներ տալու և թեմ. դպրանոցիս յատկացած ծննդական վկայականներից ստացված արդիւնքին խեթիւ նայելու նկատմամբ, մենք ոչինչ չէինք կարող ասել, բայց 72 տարեկան ծերունուն պատժել տարիածու պահելու կեղծիքով, այդ մի զարմանալի կատակ է միայն դէպի նրա զառամեալ ծերութիւնը։

Պէտք է գիտենալ, որ այդ մեղադրանքը մի և նոյն ժամանակ դայթակղեցուցիչ է ժողովրդի համար ևս, որը իրաւամբ զայրացեալ պատրաստում է մի բազմաստորագիր խնդիր առ Վեհափառ Կաթուղիկոսը, որպէս զի յիշեալ առթիւ չը պատժէ զառամեալ ծերունուն և բարեհաճի վերադարձնել արքութեան տիտղոսը, և միանգամայն ներողամիտ լինելով, հրաման տայ նորին գերապատուութեան անցուցանել իր վերջին օրերը Էջմիածնայ պարսպների մէջ։—

Մեր կարծիքով աւելորդ էր ժողովրդի կողմից այդ տեսակ խնդիրը. արդէն մանաւոր անձինք հասկացրել են Նորին Վեհափառութեան գործի էութիւնը և մենք մեծայոյս ենք, որ Վեհափառ Հայրապետը մի անկիւն կը չնորհէ պատկառելի ծերունուն, որ յիսուն տարուց աւելի է ծառայել Էջմիածնին, ամենայն հաւատարմութեամբ։ Ի՞նչ անենք, որ այժմ իր ծերութեան պատճառաւ հակամիտ է ստէպ—ստէպ պարապանցութեան մէջ ընկնելու։—

Գերապատիւ Եղիազար եպիսկոպոսի պաշտօնանկ լինելու պատճառաւ, նոր տարուայ պաշտօնական այցելութիւնների և Զբօրհնեաց հանդէսը կատարելու համար՝ Վեհափառ Կաթողիկոսն ուղարկել էր Սինոդի անդամ Գրիգոր եպիսկոպոս Տէր-Մատթէոսեանցին։

Զբօրհնեաց հանդէսը մի այնպիսի չքեղութեամբ կատարեց երիտասարդ եպիսկոպոսը, որի նմանը չատ տարիներից հետէ չէր տեսնված։ Անթիւ բազմութիւն ուղեկցում էր հանդիսին դէպի Ցորդանան և անտի դէպի եկեղեցին։ Շատ մեծ էր ժողովրդի գոհութիւնը թէ սրբազան Գրիգորից և թէ նորան ուղարկողից։

Սրբազան եպիսկոպոսը զկնի հանդիսին այցելութիւն արաւ Եղիազար եպիսկոպոսին ևս, որով չատ ուրախացրեց ժողովրդին։ Նաև կարգադրեց որ ըստ սովորութեան խաչը կնքահօր տունը չը տանեն, բայց հետևեալ օրն իսկ մեր փողոցաչտ քահանաները ծածկաբար տարան կնքահօր տունը, իրանց մի քանի կոպէկից չը զրկվելու համար, առանց մտածելու, որ դորանով վնասում են եկեղեցուն։ Գերապատիւ հայրը նկատելով մեր եկեղեցական սպասաւորների անկարգ և յետադէմ վիճակը՝ խոստացաւ անձամբ տեղեկացնել Նորին Վեհափառութեան և փութացնել մի գործունեայ առաջնորդ ուղարկելու ամենակարևոր խնդիրը։ Ցանկանում ենք յաջողութիւն այդ բարի դիտաւորութեան։

ՆՈՐԱՑԻ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 7 յունվարի

1879 թուականի սեպտեմբեր ամսից սկսեալ մինչև դեկտեմբերի վերջը անցեալ 1880 ամի ես ժողովել եմ մի քանի ռուբլի յօգուտ Նախկին Դպրոցասիրաց և Կիլիկեան, իսկ այժմեան «Միացեալ ընկերութեանց» համար, ընդամենը յիսուն և չորս ռուբլի։

Ուղարկելով ձեզ այդ գումարը և նուիրատու անձների ցուցակը, խնդրում եմ ձեզանից տպագրել «Մշակ» լրագրի մէջ այդ անձերի աղգանունները, իսկ յիսուն և երկու ռուբլին հասցնել ըստ պատկանելոյն, Կ. Պոլսի «Միացեալ ընկերութեանը»։

Նուիրատու անձների անուանացուցակը։ Ռափայէլ Պատկանեանց 3 ր., Աբգար Օրբելի 3 ր., Տրդատ Վարդանեանց 3 ր., Նիկողայոս Նաւասարդեանց 3 ր., Նիկողայոս Թարխանեանց 3 ր., Հայրապետ Տէր-Գովակիմեանց 3 ր., տ. Անտուանէտ Հասան-Ջալալեան 3 ր., տ. Սաթինիկ Հասան-Ջալալեան 3 ր., տ. Վառինկա Հասան Ջալալեան 3 ր., Մեսրովբ քահանայ Գիւլումեանց 3 ր., Օհան Քրդեանց 1 ր., Ռուբէն Հասան-Ջալալեան 5 ր., Հայկ Տէր-Ամբակումեան 5 ր., Յովհաննէս Մարգարեանց 5 ր., Կարապետ Սառաֆեանց 5 ր., Միքայէլ Վանեցեանց 3 ր.։ Ընդամենը 54 ր.։

Ռուբէն Ջալալեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 19 յունվարի

Մի քանի երիտասարդներ, անցեալ տարի ըստորագրութիւն բաց արինք յօգուտ «Արարատեան» այժմ «Միացեալ ընկերութեան», կամենալով մեր կարողութեան չափ օգնել այդ ազգօգուտ հիմնարկութեան։

Մեր ժողոված գումարը, որ 96 ռուբլ և մի քանի կոպէկ էր, խմբագրութիւնդ ստացել է նուիրատուաց ցուցակի հետ միասին։ Իսկ այդ ստորագրութեան թերթերից մինը մինչև այժմ չը կարողացանք հասցնել խմբագրութեանդ, բոլորովին մեզանից անկախ պատճառներով։ Ահա ստորագրութեան թերթի հետ միասին յանձնում եմ ձեզ դրամը, խնդրելով նաև տպագրելով նուիրատուաց աղգանունները ձեր պատուական թերթում, ի գիտութիւն նոցա։

Կ. Բաղուրեանց 1 ր. 5 կ., Մի ոմն 20 կ., Տ. Նաւասարդեանց (Երևանցի) 20 կ., Ս. Տէր-Գրիգորեանց 15 կ., Աղասի Հովիւեանց 20 կ., Սամսոն Ապրելեանց 15 կ., Հայաստանցի 20 կ., Գ. Պ. Սարգսեանց 30 կ., Գ. Բեժանեանց 20 կ., Օ. Միկիրտումեանց 20 կ., Михаилъ Байковъ 20 կ., Աղէքսանդր Եղիազարեանց 50 կ., Դաւիթ Բարսեղեանց 60 կ., Միքայէլ Շահումեանց 1 ր., Գրիգոր Եղիազարեանց 50 կ., Դարչո Շահումեանց 20 կ., Մի ոմն 90 կ., Մի ոմն 20 կ., Գրիգոր Տէր-Ստեփանեանց 2 ր., Բայիսեվելով 40 կ., Աղէքսանդր Այվազեանց 50 կ., Բարսեղ Ներսիսեանց 20 կ., Կ. Աբչարումեանց 40 կ., В. Кольцовъ 20 կ., Թադէոս Երուանդեանց 20 կ., Արշակ Դեմուրեանց 15 կ., Գեոզալեանց Տիգրան 40 կ., Բաղրատ Մխիթարեանց 15 կ., Յակովբ Մանասեանց, Նիկոդիմոս Ամատունուց 30 կ.։ Ընդամենը տասն և մէկ ռուբլի երեսուն և երկու կոպէկ (11 ր. 32 կ.)։

Այս ստորագրութեան թերթի տպագրութեան համար 2 ր. տողերիս գրողն է տուել։

Տ. Նաւասարդեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ կապիտան Կոստովիչ հնարել է մի նոր ձևի օդապարիկ մեքենայ, որ շուտով կը ներկայացնէ Ս. Պետերբուրգի տեխնիկական ընկերութեան քննութեանը։

—

«Варшавскій Дневникъ» լրագիրը հաղորդում է, որ ներքին առաջին փոխառութեան 200,000 ռուբլ տանող տոմսակը ընկաւ Եան Բէյտեր անունով հիւանդին, որ Վարշավայից ոչ հեռու դտնվող Սելցի գիւղի մի այնպիսի յետ ընկած անկիւնումն էր ապրում, որ հազիւ կարողացան նրան գտնել, նրան ուրախալի լուրը յայտնելու համար։

—

«Մշակի» խմբագրատունը յայտնում է բոլոր թղթակիցներին և աշխատակիցներին, որ խմբագրատան մէջ ստացված յօդուածները մենք չենք վերադարձնում, բացի մեծ, մշակված, հիմնաւոր յօդուածներից։ Այդ յօդուածներն էլ փոստով չենք յանձն առնում ուղարկել, այլ յօդուածագիրը պէտք է կամ ինքն յետ ստանայ, կամ յանձնի իր մի ծանօթին յետ ստանալու խմբագրատնից։

—

Զարդախլուից մեզ գրում են, որ երկար ժամանակ փակված լինելուց յետոյ, այդտեղի ուսումնարանը վերջապէս կրկին բացվել է, բայց դժբաղդաբար այնպիսի ուսուցիչ ունի, որ իր բարք ու վարքով լաւ օրինակ չէ կարող լինել աշակերտների համար։

—

Ընթերցողին յայտնի է, որ յունվարի 7-ին ԲԱԳՈՒԻ հայ թատրոնասէրները ներկայացրին քաղաքային կլուբի դահլիճում Սունդուկեանցի «Խաթաբալա» պիէսան։ Այժմ մեզ գրում են, որ այդ ներկայացումից դոյացաւ 460 ռուբլ զուտ արդիւնք, որի կէսը վճռված է տալ «Մարդասիրական» ընկերութեան ընթերցարանի օգտին, իսկ միւս կէսը Կ. Պոլսի «Միացեալ» ընկերութեան օգտին։

—

Զարմանալի բան է, որ ԹԻՖԼԻՍԻ ֆրանսիական հասարակութիւնը բոլորովին ա ս ի ա կ ա ն հասարակութիւն է դարձել։ Մեր ֆրանսիացիներին ոչ մի տեղ չէք տեսնի, ոչ տեղացիների տներում, ոչ կոնցերտներում ու թատրոններում, ոչ էլ կլուբներում։ Նրանք փակված, յետ քաշված կեանք են վարում և նայում են կարծես մեր հասարակութեան վրա ինչպէս կաթնատու կովի վրա միայն, որոնց միջոցով կարելի է հարստանալ և ապա առանց որ և է յարաբերութիւն ունենալու տեղական հասարակութեան հետ, վերադառնալ Թիֆլիսից Ֆրանսիա։ Ֆրանսիացին երբէք մի կոպէկ չի տայ տեղական մի որ և է բարեգործական նպատակին, այն ինչ ինքն հարստանում է և տեղացիներին հարստահարում է թանգ թանգ ծախելով մեզ վրա զանազան ֆոդային ապրանքներ։ Նոյնպէս, երբ որ իրանք պարահանդէս են տալիս յօգուտ իրանց բարեգործական ընկերութեան, արգելում են ծախել տոմսակներ տեղացիների վրա, արգելում են տեղացիներին իրանց չրջանի մէջ մուտքը։ Այդ երևի այն նպատակով, որ նրանցից էլ ոչ ինչ չը պահանջեն, երբ տեղական մի որ և է բարեգործութեան համար ստորագրութիւն, թատրոնական ներկայացում, կոնցերտ կամ պարահանդէս է լինում։

—

Լսում ենք, որ Գաբրիէլ Սունդուկեանց նորից մշակել է իր «Էլի մէկ զոհ» պիէսան, աւելացրել է այդ գրուածքին չորրորդ գործողութիւն և կատարելագործել է պիէսայի մէջ երիտասարդ սերունդի տիպերը։ Ասում են, որ այս օրերս մեր հեղինակի այդ ձևով փոխված պիէսան կը ներկայացնվի Թիֆլիսի թատրոնում։

—

«Кавказъ» լրագիրը լսել է, որ փետրվար ամսից սկսած պ. Պալմ այլ ևս ռուսաց օպերա չի ունենայ։ Լավում է, որ առհասարակ օպերա չի լինի Թիֆլիսում, մինչև քաղաքային մեծ թատրոնի չինութեան վերջանալը։

—

Լսում ենք, որ առաջիկայ մեծ պասին մի քանի պարոններ դիտաւորութիւն ունեն կարդալ Արծրունու թատրոնում մի չարք դասախօսութիւնների։ Ոմանք կը կարդան հայերէն լեզուով, միւսները ռուսերէն, իսկ մի պարոն կը դասախօսի ֆրանսերէն լեզուով։

—

«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս պ. դոկտոր Ժուկ հրատարակեց մի գիրք Ս. Պետերբուրգում «Мать и дитя» վերնագրով (Մայր և մանուկ)։ Այդ գրքում բազմաթիւ օգտաւէտ տեղեկութիւններ կարելի է գտնել մօր դրութեան մասին ընտանիքում և երեխաների դաստիարակութեան մասին։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են որ այդտեղի «Մշակի» բաժանորդներից չատերը չեն կարողանում իրանց համարները փոստից ստանալ, որովհետև ուրիշ անձինք, որոնք թէև սատիկ հեռաքրքրվում են «Մշակով» բայց իրանք չեն կամենում տարեկան 10 ռուբլ տալ խմբագրութեանը, փոստը ստանալուն պէս վազում են փոստատուն և սեփականացնում են լրագրի ստացված համարները։ Այդ նոր ձևի գողութեան չնորհով, որ հայի ժլատութենից է ծագում, «Մշակի» բաժանորդները չեն կարողանում իրանց անունով համարները ձեռք բերել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Բերլինից հեռագրում են, որ գերմանական թագաժառանգը յայտնել է, թէ նա բոլորովին չէ համակրում հակահրէական շարժմանը և թէ նրան չափազանց վրդովեցնում է այն իրողութիւնը, որ այդ վարդապետութիւնը մուտք է գտնում նոյնպէս և ուսումնարանների մէջ։ Թագաժառանգին չափազանց զարմացնում է այն հանգամանքը, որ հոգևոր իերարխիայի մէջ նշանաւոր պաշտօններ ունեցող անձինք նըպաստում են այդ շարժմանը։ Թագաժառանգը յոյս ունի, որ այդ շարժումը շուտով կոչնչանայ, որովհետև գործերի այդպիսի վնասակար դրութիւնը անկարելի է պահպանել։

Իշխան Բիսմարկ անընդհատ աշխատում է։ Նա մի քանի անգամ խորհրդակցել է կայսրի հետ։ Արտաքին քաղաքականութիւնը գլխաւորապէս գրաւում է գերմանական կառավարութեան ուշադրութիւնը։ Գերմանիան ցանկանում է, որ Թիւրքիայի և Յունաստանի մէջ պատերազմ չը պատահի։ Գերմանական դեսպանը Աթէնքի մէջ յայտնեց յունական կառավարութեանը, որ նա պէտք է չը սպասէ պետութիւնների օգնութեանը, եթէ Թիւրքիայի հետ պատերազմ սկսէ։ Բացի այդ գերմանական կառավարութիւնը համոզում է սուլթանին զիջումներ անել յօգուտ Յունաստանի և այդպիսով պատերազմի առաջն առնել։

Լրագիրներին Բերլինից հաղորդում են, որ հակասեմիտական շարժումը սկսված է այն նպատակով, որ պարլամենտի անդամների ապագայ ընտրութիւնների ժամանակ պահպանողականները յաղթող հանդիսանան. „Berliner Tagblat“ լրագրի բազմաթիւ բաժանորդ բանւորները նորերում մի ժողով կազմեցին և վճռեցին ոչ թէ միայն չը մասնակցել հակահրէական շարժմանը, այլ ընդհակառակը յայտնել ժողովի ատելութիւնը և արհամարհանքը այն մարդկերանց, որոնք նպաստում են հրէաների հալածանքներին։ Բացի այդ այսպէս անուանված քրիստոնեայ սոցիալիստները յայտնեցին, որ նրանք ոչ թէ միայն չեն նպաստի հակահրէական շարժմանը, այլ ընդհակառակը ձայն կը տան ընդդէմ այն բացառական օրէնքների, որոնք կառաջարկվեն հրէաներին հալածելու համար։ Այժմ պահպանողականները հասկացել են, որ Շտէօկեր և Ցրայշկէ նըրանց շատ վատ ծառայութիւն են մատուցել։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ, դեկտեմբերի 27-ին 80

Ֆրանսիան 1870-ին գերմանացիներից սարսափելի ջարդ կրելուց յետոյ և ազատվելով վերջապէս Նապոլէօն III-ի ձեռքից սկսեց աւելի իր սեպհական բարեկեցութեամբ զբաղվել։ Հասկացաւ վերջապէս, որ միշտ ուրիշների գործի մէջ խառնվելով աւելի վնասվում է, քան թէ օգտվում։ Սրան լաւ ապացոյց է այն վերջի տարիների արևելեան հարցը, որ ամբողջ Եւրոպան դողդման մէջ դցեց, իսկ Ֆրանսիան մի կողմը քաշված հանդիսատես էր այս կատակերգութեան։ Սա ոչ մի վճռողական քայլ չարաւ արևելեան հարցին վերաբերեալ և ոչ մէկի պաշտպան չը հանդիսացաւ՝ վտանգ չը տեսնելով իր շահերին. չէզոքութիւն պահպանելը աւելի ձեռնտու էր սրան։ Չը պէտք է մոռանալ, որ Ֆրանսիան այժմ պաշտպան է հանդիսանում Յունաստանին այն պատճառով, որ Թիւրքիան անամոթաբար չէ ուզում Բերլինի կոնգրէսում նշանակված տեղերը յանձնել յոյներին։ Թէև այս պաշտպանութիւնը հաստատ կերպով չէ յայտնված, բայց ասում են, իբր թէ պ. Գամբետան յունաց թագաւորի հետ խօսելու ժամանակ կոնդրէսի վճռի վերաբերութեամբ, ասել է հետևաւը,—թագաւոր, ձեր յոյսը մեզ վրա դրէք։ Այս համբաւը մեծ աղմուկ զցեց ժողովրդի մէջ և լրագիրները զարմանալով հարցնում են, թէ ինչ բանի վրա հիմնած պ. Գամբէտան այսպիսի յոյսեր է տալիս յոյներին, քանի որ Ֆրանսիան այլ ևս չէ ցանկանում ուրիշի գործի մէջ խառնվել։ Այս հարցը մնաց հարց. իսկ Աթէնքից թղթակիցները գրում են, որ յոյները մեծ պատրաստութիւն են տեսնում պատերազմի համար. թագաւորը գնում է ամեն օր զինուորական կրթութիւնը նայելու և կրկնում է Գամբետայի խօսքերը, որ մեծ ոգևորութիւն է պատճառում զինուորներին։ Թողնենք այս, այլ խօսենք այն հարցի վրա, որ աւելի է զբաղեցնում Ֆրանսիային, այն է եզուիտները և առհասարակ հոգևորականութիւնը։ Եզուիտները որ այս մի քանի տարիների ընթացքում կազմել էին բազմաթիւ միաբանութիւններ առանց տէրութիւնից թոյլտուութիւն ստանալու՝ կառավարվում էին իրանց սեփական օրէնքներով և կառավարութեան օրէնսդրութիւնը ոչինչ նշանակութիւն չունէր սրանց համար։ Նոյնպէս ուրիշ ուխտեր եզուիտներից շատ խորը արմատ էին գցել Ֆրանսիայում ժողովրդի տարրական կրթութիւնը իրանց ձեռքը՝ գցելով։ Այս հայրերը փոխանակ եղբայրութիւն, հաւասարութիւն, ազատութիւն և աւետարան քարոզելու, որ իրանց սեպուհ պարտականութիւնն էր, խառնվում էին աւելի քաղաքականութեան մէջ, պատրաստում էին իրանց աշակերտներից բթամիտ կղերականներ և հասարակապետութեան ամենաջերմ թշնամիներ։

Ճշմարիտն ասել, հասարակապետութիւնը չէր կարողանում մրցել սրանց հետ, որովհետև կըրթութիւնը ամբողջովին սրանց ձեռքն էր և որ գլխաւորն է՝ ժողովրդի մեծ մասը իրանց խաղալիք։ Ֆրանսիային չէր մնում մի այլ միջոց. այս կոպիտ ոյժը պէտք էր մտրակել. այսպէս էլ արեց։

Անցեալ մարտի 29-ին հրատարակեց մի հրովարտակ, որով բոլոր եզուիտները դատապարտվեցան ամբողջովին դուրս քշվել Ֆրանսիայից. իսկ միւս ուխտերին հրաւիրեց, որ իրանց կանոնագրութիւնը ներկայացնեն կառավարութեանը վաւերացնելու համար, որոնք չը ներկայացրին։

Ուրեմն այս ուխտերն էլ վերոյիշեալ հրովարտակի զօրութեամբ պէտք է քանդվէին և քանդվեցան էլ։ Այս հրովարտակը հրատարակվեց թէ չէ, իսկոյն բոլոր կղերական լրագրութիւնը իրար անցաւ և հրաւիրեց կաթոլիկութեանը զէնք վեր առնել իրանց եկեղեցին պաշտպանելու, բայց ժողովուրդը հանդիստ մնաց, կառավարութեան այս կարգադրութեան մէջ վնասակար բան չը նկատելով։ Ի հարկէ, այս կարգադրութեան վրա Վատիկանը չէր կարող սառն աչքով նայել, այլ հաւատացեալներին պէտք էր ցոյց տալ որ այն սուրբ տեղում չեն քնում, միշտ հսկում են իրանց հօտի վրա և սրա համար պապը մի կոնդակ գրեց հայրական խորհրդներով լցված հասարակապետական նախագահին. բայց ինչպէս երևում է, կոնդակը ընկաւ «Մշակի» հռչակված դամբուղի մէջ։ Ամեն տեղ հոգևորականութիւնը քարոզում էր ժողովրդին խիստ կերպով դիմադրել հրովարտակի գործադրութեանը։ Ամեն տեղ միենոյն անիմաստ քարոզներ էին լսվում. «Կառավարութեան փորը մտել է չար հոգին և քրիստոնէութեան մեծ վտանգ է սպառնում. հաւատացեալներ, պատրաստ կացէք այս փորձութեանը, ժամ է արդէն որ մենք մարտիրոսանալով պիտի արժանանանք երկնաւոր պսակին»։ Արդեօք ըստրանք մարտիրոսացան թէ միայն այս խօսքերը ցընդված ուղեղի արդասիք էին, յարգոյ ընթերցողը չուտով կը տեսնի։ Այս քարոզութեան ունկնդիր էին անգործ ծերեր և պառաւներ, եզուիտների բթամիտ աշակերտներ և գօմէշներ. *) մի կանոնաւոր կրթած՝ չէնք-չնորքով մարդ չէր գտնվում սրանցում։ Ահա սրանք էին ուզում մարտիրոսանալ. բայց ինչու համար, իրանք էլ չէին հասկանում ողորմելիները։ Ինչպէս երևում էր, Գաբրիէլ հրեշտակապետն էլ շատ էր դադրել այսպիսի թանձրամիտ գլուխներ դավնիով պատկել. իսկ հասարակ կանայք ծախողը արհամարհեց մինչև անգամ մի տարի տերևներից պսակ պատրաստել, որով եզուիտները կարողանային գոնեա իրանց ժիգոն *) համեմել։ Վերջապէս, ինչ երկարացնել, օրէնքը սկսեց իր գործողութիւնը։

Կառավարութիւնից նշանակված մի մարդ, որին հետևում էին ժանդարմներ, բազմաթիւ պոլիցիականներ և մի քանի դարբին և հիւսներ իրանց գործիքներով շրջապատում էր մի վանք առաւօտեան ժամի 3-ին կամ չորսին և դրան զանգակը քաշում։ Այն րոպէին և իր դրան վերի պատուհանից դուրս էր նայում մի ճաղատ գլուխ սաթաէլի կատաղի աչքերով, փրփուրը բերանում և հարցնում.

—Ինչ էք ուզում այս ժամին, ով էք։

—Մենք օրէնքով նշանակված մարդիկ ենք և խնդրում ենք, որ ձեր կամքով դատարկէք վանքը, ապա թէ ոչ կը ստիպենք։

—Դուք ապօրինի էք վարվում, պարոններ։

—Մենք մարտի 29-ին հրատարակված հրովարտակի համեմատ ենք գործում։

—Մենք ձեզ չենք ճանաչում, կորէք այստեղից—այս ասելով՝ փակում էր սնագլուխը պատուհանը առանց դուռը բանալու և անհետանում վանքի մէջ։

Իսկոյն հրաման էր տրվում հիւսներին դուռը կտրել, ասածն ու արածը մէկ էր լինում և կացնի հարուածների տակ դուռը ջախջախված վայր էր ընկնում։ Այս գործողութիւնից յետոյ ժանդարմները մէկ մէկ դուրս էին բերում սնահոգիներին և ասում «24 ժամի ընթացքում Ֆրանսիայից դուրս պէտք է գնաք, դուք այլ ևս իրաւունք չունէք այստեղ մնալու»։ Ողորմելիներին ոչ ոք չէր խղճում, այլ ընդհակառակն խառնը բազմութիւնը սրանց տեսնելով աւելի կատաղում էր և գոռում «á bas les colattins, vive la République Francaise». իսկ երիտասարդութիւնը մի կողմը քաշված «Marsaillaise» էր երգում ուրախ ուրախ։ Այս գործողութիւնը կատարվում էր ամբողջ երկրում և Ֆրանսիան մաքրուեցաւ վերջապէս սնագլուխներից։ Բայց պէտք է գիտենալ, որ շատերը սրանցից չեն հեռացել այս տեղից, այլ աշխարհականի շոր հագած չօկօլատի և սրա նման բաների վաճառականութեամբ են պարապում, մանաւանդ հարաւային Ֆրանսիայում։

Ծիծաղելի է ճշմարիտ, այս անամօթների արածը. երևակայիր, սիրելի ընթերցող, չօկօլադի էտիքէտի վրա գրում են հետևեալը—բարի Քրիստոսի չօկօլադ։

Խեղճ Քրիստոս, ինչ էր քո մեղքը, որ հրէաներից տանջվելով և հռոմայեցիներից խաչվելով՝ հազար տարիներից յետոյ չօկօլադ պատրաստող են շինում քեզ այս չար ծնունդները.... Այժմ մնում է կոյսերի հարցը, որի համար սենատում ասել են, որ սրանց հետ ուրիշ տեսակ պէտք է վարվել. և ճշմարիտ, սրանց գլխին չէ կարելի եզուիտների օյինը խաղալ։ Եթէ ինձ հարցնեն, ես խորհուրդ կը տայի կառավարութեանը այնպէս անել, որ սրանք ստիպված մի մի սիրուն մարդ ուզեն և Ֆրանսիային մի քանի զաւակ ընծայեն, որով թէ երկիրը կը բազմամարդանայ և թէ ժողովուրդը չատ դոհ կը մնայ։

Ահա նոր տարին մօտենում է, հասարակապետութիւնը մնում է բախտաւոր կերպով խաղաղութեան երեքպատնեայ դրօշը պարզած իր 11 տարուայ շրջանում, որը խոստանում է մեծ յոյսեր Ֆրանսիային և ամբողջ տիեզերքին։

Նոր տարու պատճառով բոլոր բուլվարները ծածկվեցան փոքրիկ փայտեայ խանութներով, ուր ամեն բարիք դարսված՝ անցուդարձողի ուշադրութիւնն են գրաւում։

Փարիզը, առանց այն էլ կեանքով եռուն քաղաքը, ուրախութեան տօն է կատարում այսօր. ամեն մարդ, փոքրից մինչև մեծը գեղեցիկ հագած առաւօտեան մինչև ժամի 3—4 բուլվարի վրա է անցկացնում։

Վաճառականների աղաղակը, երեխաների ճըղոցը և հազարաւոր կառքերի գոռոցը մարդու գլուխ են տրաքացնում։ Հապա ուսանողները... այս Եպիկուրի զաւակները և Լատինական թաղի հաւատարիմ բարեկամները չափն ու սահմանն անցրին իրանց երեխայական արարմունքով։ Ամենաանհամ և անճոռնի ձայն հանող զուռնա դուդուկ բերաններին դրած և մի քանիսն էլ ծիծաղաշարժ դիմակն երեսին, անց ու դարձ են անում բուլվարների վրա գոռալն գոչելով։

Հիմայ, սիրելի ընթերցող, արի ու դիմացիր այս բոլորիս։ Պէտք է գիտենաք, որ այստեղ նոր տարու համար հրացան ու թնդանօթ չէ արձակվում, այլ վառօդն ու գնտակը պահում են գազան մարդկանց համար ինչպէս տաճիկներին։

Ա՛ռ այժմ այսքան էլ բաւական է և խոստանում եմ ձեզ շատ տեղեկութիւն տալ Փարիզի մասին ուրիշ անգամ, միայն թէ ստորագրութեան վրա շատ չը զարմանաք, սա իսկութիւն է...

Լանդիշ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական «Figaro» լրագիրը հետևեալ հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս իր հրատարակութեան մասին։ Խմբագրութեան ամբողջ շտաբը բաղկացած է 310 մարդուց։ Խմբագրութեան մշտական աշխատակիցներ 50 հոգի են, 20 մարդ կանտորայի մէջ ծառայող, 50 գրաշարներ, 8 էկսպեդիտորներ, 12 ծառայող խմբագրատան մէջ, 170 ցրուողներ, որոնք բոլորը միասին ստանում են խմբագրութիւնից տարեկան 800,000 ֆրանկ։ Բացի այդ փոստատանը վճարվում է 340,000 ֆրանկ և 220,000 ֆրանկ չտեսնվելի հարկ։ Եօթ տարվայ ժամանակամիջոցում այդ թերթի ակցիօներական ընկերութիւնը, որի գրամագլուխը կազմում էր 1,200,000 ֆրանկ, զուտ արդիւնք ստացել է 6,144,000 ֆրանկ։ Անցեալ 1880 թվին, զուտ արդիւնք ստացվել է 1,693,256 ֆրանկ։ Տպագրվում է տարեկան 30,000,000 օրինակ, «Figaro» այն թերթերից է որ Փարիզում անուանվում է փոքր մամուլ։

* *

Ֆրանսիացի երևելի վիպասան տիկին Ժորժ Զանդի մահից յետոյ գտնվել է անագին քանակութիւն նամակների։ Նրա որդին Մորից Զանդ դիտաւորութիւն ունի նրա այդ նամակներից մօտ չորս հազար հատ տպագրել տալու։ Բայց հանգուցեալի ամենահետաքրքիր նամակագրութիւնը որ ունեցել է նա Ալֆրէդ Միւսէի, Լամենոյի և իշխան Գալիցկու հետ, հատանձին հանգուցեալի ցանկութեան, երբէք տպագրվելու չէն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 19 յունվարի։ Կարլէյլ (?) ծանր հիւանդացաւ։ „Daily News“ լրագիրը լսել է, որ կառավարութիւնը սկզբունքով վճռեց դադարեցնել վիճաբանութիւնները, հէնց որ կրիզիս կը սկսվի և համայնքների ժողովին այդ առիթով ուրոշ առաջարկութիւն կը ներկայացնվի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ „Голосъ“ լրագրին նալատից հեռագրում են յունվարի 19-ից. Երկկ վերջացած ֆիլոկսերայի մասնաժողովի նիստը վճռեց սկսել որթերը բժշկել և արմատականապէս ոչնչացնել ֆիլոկսերան ծծումբաթթուով, հանել վարակված խաղողենիները, որթերը և արմատները այրել։ Բուատօի եղանակով։ Փոխել խաղողենիների մատներ կտրելու մասին ժամանակաւոր կարգադրութիւնը։ Մատների այրելը յետաձգել մինչև մայիս ամիսը, վերաքննել Ղրիմի բոլոր խաղողենիները մինչև յուլիս ամսվից հրավիրված էկսպերտի առաջնորդութեամբ, միջնորդել որ արգելվի հարաւային նաւահանգիստները խաղողի և դեղձի բերելը։ Կազմել չը վարակված ամերիկական խաղողենիների այգիներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ նեղքին գործերի մինիստրը մտադիր է պարբերական նոր հրատարակութիւններին այլևս թոյլատրութիւն չը տալ, ի նկատի ունենալով, որ եղածների թիւը կատարելապէս բաւականացուցիչ է համարվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 12 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր., երկրորդ 220 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 92 ր., ոսկի 7 ր. 93 կ։ Ռուսաց 1 ր. Լօնդոնի վրա արժէ 25,19 պէնս, Ամստերդամի վրա 127½ պէնս. ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 214½ մարկ, Փարիզի վրա 266 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

*) Սրանք կազմում են մի դասակարգ, որոնք միշտ լաւ և մաքուր հագնված՝ ամբողջ կեանքը միրը կանանց հետ են անցկացնում, սրանից աւելի ուրիշ ոչնչով չեն պարապում։

Ծ. Հ.

*) Սխտորով համեմած ոչխարի խորոված բուդն է, որ ֆրանսիացիք ուտում են խաչած ճերմակ լուբիայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շոկոլադ-Ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամքեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Ապրանքները գալիս են։ 100—36

ՓԱՍՏԱԲԱՆ ԵՎԳԵՆԻ ԴԻՄԻՏՐԵՎԻՉ ՏԻԽՈՄԻՐՈՎ առաջարկում է ցանկացողներին ամեն տեսակ **ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ** պաշտպանութիւն, բացի այդ **ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ** և գործնական թղթերի **ԿԱԶՄԵԼԸ։** Ընդունում է առաւօտեան 8—11 և երեկոյեան 6—8 ժամը։ Հիւրանոց „ПАРИЖЪ“, № 3, Գոլովինսկայա փողոց։

3—3

Ամբողջ հագուստ կամ պալտօ 15 ր., բէվոլվերներ 4 ր. և աւելի թանգ, կոնֆէկտներ հապի դէմ 60 կ. ֆունտը, խինայի գինի և փշի ջերմի դէմ 1 ր. 50 կ., խերես, պօրտվէյն 1 ր. 20 կ., կոնեակ շիշը 2 ր։ Բացի այդ Անգլիական խանութի մէջ ստացված է թէյ մեծ քանակութեամբ։

12—12

Ապրելն բաւականին ունեմ ժողոված և դարձեալ ժողովում եմ **ՀԷՔԻԱԹՆԵՐ, ԱՌԱԾՆԵՐ, ԱՆԷԾՔՆԵՐ, ՕՐՀՆԱՆՔՆԵՐ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ՇՈՒՏԱՍԵԼԻՔՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ,** բուն **ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ, ՈՃԵՐ**։—երկրագործական գործիքների, տնային կահ-կահասիների, բոյսերի և այլն անուններ։ Մի խօսքով **ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՒՈՐ ԲՈԼՈՐ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ։**

Մեզ բաւականաչափ նիւթ ուղարկողները, գրքի տպագրութիւնից յետոյ, մի մի օրինակ ձրի կը ստանան. բացի այդ նոցա ազգանունները կը տպագրվեն գրքի մէջ։ Մեր հասցէն։

Тифлисъ. Частная Лѣчебница; доктору Баграту Навасартянцъ. Տ. Նաւասարդեանց։

5—6

ОТКРЫТА ПОДПИСКА

НА 1881 ГОДЪ (4-Й ГОДЪ ИЗДАНІЯ)

НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Тифлисѣ, съ доставкою на домъ, на годъ..... 3 руб.
„ „ „ на ½ года..... 2 „ 50 к.
Иногороднымъ съ пересылкою на годъ..... 5 „
„ „ „ на ½ года..... 4 „

Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ редакціи, НА ДВОРЦОВОЙ УЛИЦѢ, въ домѣ САРАДЖЕВА, съ 9-ти утра до 8-ми часовъ вечера.

4—6

ՀԵՄՕՐՕՒԴԱԿԱՆ ԲՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՆԻԹ փորձված և առաջարկված պրոֆէսոր բժշիկ **ԿՐԵՏԿՕՎՍԿՈՒՑ** շատ դեղեցիկ միջոց է **ՍՏԱՄՈՔԻ ՋԱՆԱՋԱՆ ՑԱՒԵՐԻ** դէմ, մաքրում է և շատացնում է **ԱՐԻՒՆԸ,** վերականգնում է **ՄԱՐՄՆԻ** ընդհանուր հարմնեան, մանաւանդ՝ առաջարկվում է **Հիմտրօի և Իպախօնդրիա ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆՆ** դէմ։ Մի շիշը, գործածելու **ԽՐԱՏՆԵՐՈՎ** 1 ր. 80 կ.։ Օտարաքաղաքացիք ուղարկում են **ՓՈՍՏԻ** ծախսը։ Ծախվում է Ռուսաստանի **ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՍՏՆՆԵՐԻ** մէջ և դեղերի պահեստների մէջ։ Պահեստը Մոսկվայումն է, Ն. Մատէնաէ-ինի մօտ, Տվերսկայա փողոց։ Կիշինէովի մէջ Կայուշանսկու և Բրայունշտէյնի մօտ։ Վարշավայի մէջ Ա. Ֆ. Դալլէի մօտ։

4—25 (5)

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ,** մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Սի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ,** մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաւորի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

6—100

Ձր նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվին **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական ըէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ,** ջօնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ,** տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաօ-շոկոլադի ծախելու համար, որոնք փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Պ աճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբող հագուստ 15 ր., կոնֆէկտներ հապի դէմ 60 կ. ֆունտը։

6—100

Ներկայ **ՅՈՒՆՎԱՐ** ամսի 7-ից **ԳՈՒՆԻՐԸՆ** հրապարակի վրա, **ԳՕԴՖՐՈՒԱ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՑԻՐԿԻ** մօտ բացել եմ **ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԴԱՀԼԻՃ** մարմնամարզական վարժութիւնների համար առաւօտեան 8 ժամից մինչև երեկոյեան 10 ժամը։ Մարմնամարզութիւն կարող են անել մարդիկ **ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱԵՌԻ ԵՒ ՀԱՄԱԿԻ։ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ** մանրամասները կարելի է իմանալ **ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻ** գրասենեակի մէջ առաւօտեան 10—12 ժամը։ Դահլիճի մէջ կարելի է սովորել **ԿԱՆԷՕԿՆԵՐՈՎ,** սլանալ, **ՎԵԼՕՍԻՊԷԴՕՎ** վազել և սովորել **ՄԱՆԱՄԱՐՏԱԿԱՆ** արհեստը։

ՅՈՎՍԷՓ ԼՕՊԵՍ

2—6

Առնում են ամեն տեսակ **ՁՈՒԳՈՒՆԻ** և **ՊՂՆՁԻ** կտորտանքներ, Գէորգեան եկեղեցու մօտ, **ՄԴԻՎԱՆԻԻ** տանը Կախէթու գինիների մարանում։

3—25

Անգլիական խանութի մէջ ծախվում են ըէվոլվերներ, որոնցով մի անգամից կարելի է 20 աւազակ սպանել, իւրաքանչիւր աւազակ 1 ր. 50 կ.։ Մի և նոյն տեղը ամեն տեսակ **անգլիական զէնք** միւս տեղերից 30% էժան։ Ապրանքների գաղէրէյ։

11—12

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր.	5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ				Ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր.	10 կ.	—	—	— — Ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր.	20 կ.	—	—	— — Ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր.	40 կ.	—	—	— — Ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր.	60 կ.	—	—	— — Ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր.	80 կ.	—	—	— — Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր.	—	—	—	— — Ֆ. 3 ր.

25—100

ԻՎԼԻՈՒՍ ԳՐԵՑԻ Վ ԿԱՅՍԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՋՈՑ (դեղ) **ՈՍԿՐԱՑԱՒԻ ԵՒ ՐԵՎՄԱՏԻԶՄԻ** դէմ։ Ամենալաւ օգնող միջոց է, որ կարելի է հեշտութեամբ և առանց ցաւի գործ դնել ամեն տեսակ **ՈՍԿՐԱՑԱՒԻ ԵՒ ՐԵՎՄԱՏԻԶՄԻ** դէմ, մանաւանդ մատների և ջղերի ցաւի և մարմնի զանազան մասերի կծկման՝ դէմ, միակողմանի գլխացաւի (միգրէնի) դէմ, գլխի կծկման դէմ և մինչև անգամ **ԿՐԿՆՎՈՂ ՋԵՐՄԻ** դէմ, սրտի ափերի և կրծքի բորբոքման դէմ, ռեվմատիզմի հետևանքների դէմ նոյնպէս և արտասահմանեան ջրերից լաւացողների համար։ Վկայականի միակ տերը Իվլիուս Գրեց, Վիեննա, II Prater strasse № 49. Ծախվում է 4 ռուբլի գործածութեան խրատներով Ռուսաստանի բոլոր դեղատունների մէջ։ Գլխաւոր պահեստը Մոսկվայի Ր. կեօլեր և ընկ. խանութի մէջ, Նիկոլսկայա փողոցի վրա։ Փոստային ծախսի համար 40 կ. է ուղարկվում։

16—25 (3)

Բացվում է թարմ **ՍԵՐՄԵՐԻ** դէպօ (պահեստ) Տաղանդ № 19, Բարեկամաբանական Գրադարանի դիմաց։ Նոսկի գինիներ։ Լաւագոյն գինի։

8—10

VICHY

Складъ въ ПАРИЖѢ,
22, бульваръ Монтмартръ.

PASTILLES DIGESTIVES, приготовленныя въ Виши изъ соли, добываемой изъ особенныхъ источниковъ, весьма пріятны на вкусъ и хорошо дѣйствуютъ противъ тошноты и труднаго пищеваренія.

SELS DE VICHY POUR BAINS. Одинъ свертокъ для ванны лицамъ, не могущимъ лечиться въ Виши.

Во избѣжаніе поддѣлки, требовать на всѣхъ марку.

Компаніи.

Թիֆլիսում Յուրինովի մօտ։

ԼՕՆԴՕՆԻ ԽԱՆՈՒԹ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱԿ բացված է ծախելու համար իսկական, լաւ **ԹԷՅԵՐ** և այլ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ,** օրինակ, **ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, ԿՈՂՊԷՔՆԵՐ,** ամաններ, **ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ,** դանակներ, գդալներ, **ԹԷՅԱՄԱՆՆԵՐ,** շոկոլադ, **ԿԱԿԱՕ,** հոտաւէտ ջրեր, **ՍԱՊՕՆ,** թաշկինակներ, **ԳՈՒԼԲԱՆԵՐ,** թուղթ, մատիտներ, **ԳՐԻՉՆԵՐ,** թամբեր, սուկրիս։ Ջրթաց լինող **ՊԱԼՏՕՆԵՐ,** մակ-ինտոշներ։ Հավանայի իսկական **ՍԻԳԱՐԱՆԵՐ** և անգլիական կոնֆէկտներ։

6—100

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Января 1881 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.